

ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՅԱՆԸ ԼԵԶՎԱԲԱՆ-ՀԱՅԱԳԵՏ

(Ծննդյան 110-ամյակի առթիվ)

Ռաճասիր. գիտ. դոկտոր Հ. Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ականավոր հայագետ Գրիգոր Այվազի Ղափանցյանը ծնվել է 1887 թ. Աշտարակում: Սովորել է Աշտարակի երկրասյան դպրոցում, ապա 1899-ին մեկնել է Պետերբուրգ՝ ուսումը շարունակելու: 1908 թ., ավարտելով տեղի արական գիմնազիան, ընդունվել է 1913-ին ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետի «այ-վրաց-պարսկական բաժինը»: Վերադառնալով Հայաստան՝ մինչև 1918 թ. դասավանդել է էջմիածնի Կեդրյան ճեմարանում, ապա 1920 թ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում: 1930 թ. Ղափանցյանին շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1942 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1942 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան, 1943-ին ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր կազմի անդամ: Այդ թվականից սկսած Ղափանցյանը պաշտոնավարել է Գիտությունների ակադեմիայում:

Պետերբուրգում Ղափանցյանը լեզվագիտության ասպարեզում աշակերտեց Ի. Բոդուեն դե Կուրտենենին, կովկասագիտության ասպարեզում՝ Ն. Մառին, պատմագիտության բնագավառում՝ Ն. Ադոնցին, վրացերեն սովորեց Ի. Զավախիշվիլուց, պարսկերեն՝ Կ. Զալեմանից: Մեծանուն գիտնականների այս անվանացանկին ծանոթանալուց հետո միայն մեզ պարզ է դառնում, թե ինչու Գ. Ղափանցյանի գիտական ժառանգությունը հավասարապես բարձր է գնահատվում թե՛ հայ և ընդհանուր լեզվաբանության, թե՛ կովկասագիտության ու փոքրասիական հնագույն լեզուների ուսումնասիրության և թե՛ հնագիտության ու պատմագիտության հարակից գիտաճյուղերի բնագավառներում:

Գ. Ղափանցյանի հետազոտությունների թեմատիկ սահմաններն սկսվում են ընդհանուր լեզվաբանությունից, ապա անցնում են խեթերեն—հայերեն, խուրի—միտանական լեզուներ—հայերեն, հայասերեն—հայերեն, ուրարտերեն—հայերեն, ճանո-մեգրեական կամ լազո-մեգրեական լեզուներ—հայերեն լեզվական աղբյուրների, կառուցվածքի ու ժառանգաբանության քննությանը և ավարտվում են այդ ուսումնասիրությունների եզրակացությունները վերահաստատող հատկանունների (տեղանուններ, անձնանուններ), պաշտամունքի և աստվածությունների, ապա նաև մշակութային այլ անունների բառաքննություններով ու ստուգաբանություններով: Ղափանցյանի գիտական այս ժառանգության առաջին ամփոփ, բայց և խոր ու համակողմանի վերլուծություն—գնահատումը գտնում ենք ակադեմիկոս էդ. Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» (Երևան, 1962) աշխատության մեջ: Աղայանի հավաստմամբ առանց Ղափանցյանի տեսակետների ու կարծիքների վկայակոչման ու գնահատման, դարիս երկրորդ կեսին լույս չի տեսել և ոչ մի հայագիտական նշանավոր թե՛ երկրորդական ուսումնասիրություն:

Գր. Ղափանցյանի առաջին լեզվաբանական գործը «Լեզվաբանական դիսցիպլինաներ և լեզու» աշխատությունն է, որը լույս է տեսել 1914 թ.: Այս և հետագա լեզվաբանական հետազոտությունների արդյունքները ամփոփված են «Ընդհանուր լեզվաբանություն» գրքում, որով Ղափանցյանը մեզանում ստեղծեց լեզվաբանության առաջին ամփոփ ուսումնասիրությունն

ու բուհական դասագիրքեր: Սա բաղկացած է ներածական ընդհանուր մասից, հնչյունաբանությունից, ձևաբանությունից և բառագիտություն-իմաստաբանությունից: 1914 թ. վերոհիշյալ ուսումնասիրության մեջ նա գրել է. «Բոլոր լեզվային սխառնանքները մարդկության հոգեբանության արտաքին արտացոլման որոշ ձևեր են»¹: Լեզվական երևույթների ձևավորման հիմքում տեսնելով անհատի հոգեկան գործողությունները՝ հեղինակը դրանով մի կողմից՝ լեզուն ճանաչում է իբրև «անհատների մտ հոգեբանորեն ձևավորվող երևույթ», իսկ մյուս կողմից՝ այդ անհատականը համարելով ընդհանուրի դրսևորում, լեզուն ճանաչում է որպես ազգի հոգեբանությունն իր մեջ ամփոփող ընդհանուր երևույթ:

«Ընդհանուր լեզվաբանություն» աշխատության մեջ ավելի հստակորեն է ձևավորվում հեղինակի հայացքը՝ լեզվի պատմահասարակական ծագման ու գոյի վերաբերյալ, որն ստանում է «լեզուն, ուրեմն, պատմահասարակական մի երևույթ է»² ճշմարիտ ձևակերպումը:

Լեզվի ծագման, կառուցվածքի և զարգացման հարցերի տեսական քննությունն մեջ Գր. Ղափանցյանը տուրք է տվել Ն. Մառի լեզվի «նոր ուսմունքին» և պաշտպանել տեսական մի քանի սխալ դրույթները՝ մասնավորապես լեզվի վերնաշենքայնության ու դասակարգայնության, լեզուների խաչավորման վերաբերյալ: Միաժամանակ նա այդ հարցերը քննելիս հարկադրված է եղել հետևելու ժամանակի միակ թույլատրելի փիլիսոփայության՝ մարքսիզմի դրույթներին, մասնավորապես՝ ձևի և բովանդակության, ձևի նկատմամբ բովանդակության առաջնայնության, երևույթները (այդ թվում և լեզվական) բազմաթիվ ու վերնաշենքի բաժանելու, սրանց քանակական փոփոխություններից որակականի, աստիճանականից թռիչքայինի, անդասակարգայինից դասակարգայինի անցնելու և այլնի վերաբերյալ: Ահա թե ինչու սխալ շէր լինի ասել, թե Ղափանցյանի ուսումնասիրության մեթոդի, տեսական վերլուծությունների և գիտական եզրակացությունների մեջ՝ հետազայում հետազոտողների կողմից բացահայտված թերությունները մի հիմնական մասով պայմանավորված էին այդ ժամանակներում պարտադրված և անքննադատելի համարված վերոհիշյալ ուսմունքների իսկ միակողմանիությամբ և հակասականությամբ:

Կրկին անդրադառնալով հեղինակի ընդհանուր լեզվաբանական հայացքներին՝ պիտի նկատենք, որ դրանք բնութագրվում են տեսական թարմությունամբ ու նորարարությամբ և գործնական լայնածավալ ընդգրկունությամբ: «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատության մեջ բացահայտված են հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական բազմաթիվ օրինաչափություններ ու կանոնարկումներ: Այս շարքում Ղափանցյանի բերած նորություններից հատկապես նշվում են ձևույթի՝ որպես լեզվական կարգի, ըմբռնման, և հնչույթի՝ որպես լեզվական միավորի, տեսության նորամուծությունները հայ լեզվաբանության մեջ: Այդ գրքում, հրեթացս լեզվաբանական իրողությունների տեսական վերլուծության, վկայակոչվում և վերլուծվում է գրական հայերենի (գրաբար, միջին հայերեն, նոր հայերեն) և բարբառների համարյա ողջ լեզվանյութը: Այդ ամենը նկատի ունեւ էր. Աղայանը, որ գրում էր. «Ամբողջությամբ վերցրած, Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» ներկայացնում է իր ժամանակի սովետական լեզվաբանության ամենաբարձր մակարդակը»³:

Ընդունելով լեզուների ցեղակցության ու այն հայտնաբերողների գործադրած պատմահամեմատական մեթոդը, բայց միաժամանակ մերժելով

1 Գ. Ղափանցյան. Լեզվաբանական դիսցիպլինաներ և լեզու.—«Արարատ», 1914, № 3, էջ 8:

2 Գ. Ղափանցյան. Ընդհանուր լեզվաբանություն. հ. 1, Երևան, 1939, էջ 19:

3 Է. Բ. Աղայան. Հայ լեզվաբանության պատմություն. հ. 2, Երևան, 1962, էջ 218:

դասական հնդեվրոպաբանության՝ հայերենի հնդեվրոպական ցեղակցության տեսությունն ու, մանավանդ, հայերի ոչ տեղաբնակ, այլ եկվոր լինելու հնդեվրոպաբանական տեսությունը՝ Դր. Ղափանցյանը իր մի շարք ծավալուն հոդվածներում և մեծ ու փոքր մենագրություններում՝ առաջ է քաշում



հայերենի ծագման փոքրասիական-կովկասյան կամ հայաստանյան տեսությունը: Սակայն եթե դասական հնդեվրոպաբաններին ինչ-որ չափով խանգարում էր հայերին ու հայերենը եկվոր համարելու կանխադրույթը, ապա Ղափանցյանին էլ խանգարում է հայերին ու հայերենը մշտապես տեղաբնակ և ոչ հնդեվրոպական ճանաչելու կանխադրույթը: Եվ եթե դասական հնդեվրոպաբանները հայերենի ցեղակցության հարցը լուծում են նրանում հնդեվրոպական լեզվատարրի հաղթանակը և ոչ հնդեվրոպականի ձուլում-վերացումը արձանագրելով, ապա Գր. Ղափանցյանը հարցը լուծում է հայերենը խաչավորված կամ խառնածին լեզու ճանաչելով՝ Մառի տեսության մասնակի խմբագրմամբ: Լսենք իր՝ Ղափանցյանի դատողություն-եզրակացությունները՝ ամփոփված «Հայոց լեզվի պատմություն. հին շրջան» գրքում:

«Իմ կարծիքով հայերենի նկատմամբ ծագումնաբանական (գենետիկական) հետևություն անելը հօգուտ հնդեվրոպականի (par excellence) թերևս միակողմանի է (...): Լեզվական տեղային (ասիանիկ) փաստերը, ինչպես նաև հայ էթնիկայի, կուլտուրայի, կրոնի և նյութական կուլտուրայի

⁴ Ուրարտուի պատմություն. Երևան, 1940: Историко-лингвистическое значение топонимики древней Армении. Ереван, 1940: Արա գեղեցիկի պաշտամունքը. Երևան, 1945: Хайаса—колыбель армян. Ереван, 1947: Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961 և այլն:

տվյալները խոսում են հօգուտ հայերենի փոքրասիական կուլտուրական ծագման, հօգուտ այս ասիանիկ ընտրանի⁵։ Հեղինակի քննած և վերը թվարկած տվյալներից իրոք կարելի էր եզրակացություն անել հայերենի ոչ այնքան լեզվական ցեղակցության, որքան նրա «փոքրասիական կուլտուրական ծագման» մասին։ Ձևայած իր տրամադրության տակ ունեցած սակավ լեզվաբանություն՝ Ղափանցյանը վստահորեն եզրակացնում է. «Այնուամենայնիվ պետք է ընդունել, որ հայոց նոր լեզուն, որի փայլուն վկայությունը մեր հին դասական լեզուն է («գրաբարը»), կազմվել է հայասցիների, խեթերների ու խուռո-ուրարտական լեզուների, ինչպես և հնդեվրոպական մի (կամ մի քանի) լեզվի խառնուրդով⁶։ Սակայն այս հնդեվրոպական տարրը, որքանով էլ որ Ղափանցյանի կողմից հետևողականորեն փոքրացվում է, այսուամենայնիվ մնում է այնքան շոշափելի, որ հեղինակը միաժամանակ գրում է. «Հայերենը ունի ուժեղ չափով շեշտված հնդեվրոպական նկարագիր, որը նստել է տեղական փոքրասիական (ասիանիկ) լեզուների վրա, այդպիսով կազմելով մի յուրատեսակ խաշավորված նոր լեզուն»⁷։

Այստեղ կարևորն այն է, որ Ղափանցյանը, հայերենի բառապաշարն ու քերականական կառուցվածքը համարելով խառնածին նոր որակ, դրանով իսկ նրա ծագման հարցը որոշում է սոսկ տեղային (փոքրասիական-կովկասյան) հատկանիշով։ Նա իր վերլուծություն-ստուգաբանություններով նվազեցնում է մեր լեզվի հնդեվրոպական տարրերը (արմատներ, բառակազմական և բառահարաբերական ձևեր⁸)՝ նրա հնդեվրոպական հիմնաշերտը, փոքրասիականի համեմատությամբ, համարելով երկրորդական լեզվաբանական վածք։ Գալով հեղինակի՝ հայերենի մեջ փոքրասիական լեզվաշերտի վերլուծությունը հավաստիությանը, նկատենք, որ այդպիսի փաստարկված հավաստիություն նա ինքն էլ չի տեսնում։ «Հայասայի լեզվից դժբախտաբար ոչ մի նմուշ չի մնացել,—գրում է Ղափանցյանը։—Միայն կարելի է ենթադրել, որ այդ լեզուն ազգակից կարող էր լինել բալայերենին, որից նույնպես ոչինչ չունենք»⁹։ Ղափանցյանի կողմից քննված են՝ խեթերներով վկայված հայասական 15 տեղանուն և 5 աստվածանուն։ Մեծ չէ նաև հայերենի ուրարտական և խուռի-միտանական ծագման լեզվատարրը, որի մասին հեղինակը նշում է. «Բայց որովհետև ուրարտական և խուռիտական այդ լեզուների շատ տարրերը (բառեր և ձևեր) մեզ մնում են դեռ անըմբռնելի, ուստի ստորև բերվող մեր այս լեզվական համեմատական ուսումնասիրությունը հարկավոր կլինի շատ թերի»¹⁰։

Ավելի փաստարկված և ծավալուն է խեթերեն-հայերեն (հայասերեն) բառային ընդհանրությունների քննությունը (ավելի քան 130 բառ)։ Բայց քանի որ խեթերենի՝ որպես հնդեվրոպական լեզվի ճանաչման պարագայում, որ առդեն կասկած չի հարուցում, Ղափանցյանի այդ ստուգաբանությունները այլ արժեք են ձեռք բերում, ուստի գիտնականը, նկատելով այդ, հարկադրված վերադառնում է նույն հիմնահարցին. «Եվ խեթերենը,—գրում է նա,—որ չգիտեմ ինչու անվերապահորեն կոչվում է հնդեվրոպական կամ մի առանձին ներկայացուցիչ այդ լեզվաընտանիքի կողքին, ունի բազմաթիվ ոչ հնդեվրոպական տարրեր, թեպետ ավելի քիչ, քան հայերենը։ Բառամթերքի տեսակետից տեղական, փոքրասիական մասը գերիշխում է թե՛ հայերենում և թե՛ խեթերենում»¹¹։

Նույն կանխադրությն է պատճառը, որ Ղափանցյանը հայերենի շատուգաբանված շուրջ հինգ հազար արմատները համարում է «տեղական, ասիա-

5 Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, էջ 223—224։

6 Նույն տեղում, էջ 39—40։

7 Նույն տեղում, էջ 11—12։

8 Նույն տեղում, էջ 62։

9 Նույն տեղում, էջ 103։

10 Նույն տեղում, էջ 217։

կան» լեզուների բառերը Սակայն, այնուամենայնիվ, առաջնորդվելով հայերենի կառուցվածքի իրական պատկերի իր հավաստի ըմբռնմամբ, անվանի դիտնականը միաժամանակ գրում էր. «Հայերենը իր քերականական մասով ավելի է հնդեվրոպական, թեև բառակազմական միջոցներով կարծես թե հավասար դրուժյան մեջ է (հնդեվրոպական թե ասիական)»¹¹։ Կարևոր է ընգծել, որ դեռևս 1946 թ. «Հայոց լեզվի ծագման շուրջը» ծավալուն հոդվածում Ղափանցյանը գրում է. «Տվյալ լեզվի նախագրային կացությունների (կամ կացության) ուսումնասիրության համեմատական մեթոդը, թեպետև սահմանափակ է և անկատար, այնուամենայնիվ, նա տալիս է որոշ ձեռքբերումներ, որոնք միանգամայն ունակ են և հաճախ հետազայում արդարանում են նորանոր գիտություն և հետևապես միանգամայն իրեն արդարացնում է և իր կիրառման մեջ տակավին միակն է։ Հարկավ ալդպիսի համեմատությունը ի կատար է ածվում հնչյունաբանական խիստ օրինաչափությունների հիման վրա, այլ ոչ թե կանխակալ և բռնազրոսիկ կերպով, երբ անտես են առնվում ժամանակը, պատմական հնարավոր աղբյուրները և լեզվական իրավությունները ուսումնասիրվող լեզուների կառուցվածքում, ֆետիշադման ենթարկելով անգամ ալծմյան հնչյունական դրուժյունը, մտահանդողար բաժանելով լեզուն էլեմենտների, ստադիաների և այլն, լեզուների համընդհանուր պատճառով շտեմնելով տվյալ լեզվի կոնկրետ կյանքը՝ իր պատմական կեցության շրջապատի, պայմանների և այլնի մեջ»¹²։ Տասր տարի անց միայն Գր. Ղափանցյանը համարձակվում է այս քննադատությունը հասցնադրել Մոսկի լեզվի ռնոր ուսմունքին»։ Այդուամենայնիվ, այն ժամանակի համար անսովոր այս քննադատությունը խոսում է Ղափանցյանի՝ որպես իր գիտական համոզմունքների մեջ հետևողական և սկզբունքային գիտնականի մասին։

Մեծ է Ղափանցյանի գիտական վաստակը հայերենագիտության բնագավառում։ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Զահուկյանը, որը նաև հայերենի ծագման ու ցեղակցական կապերի և նրա հնագույն շրջանի կառուցվածքի բոլոր տեսությունների ու վարկածների բացառիկ մանրակրկիտ քննող և գնահատող լեզվաբան է, իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ գրել է. «Ամենից ավելի հանգամանալից կերպով հայ-ուրարտական լեզվական առնչությունների հարցով զբաղվել է Գր. Ղափանցյանը»¹³։ Գալով հայերենի հայաստանից ծագած լինելու տեսությանը՝ ըստ Զահուկյանի՝ «Այս կարծիքը ամենից ավելի հստակ կերպով ձևակերպված է Գր. Ղափանցյանի կողմից»¹⁴։

Ղափանցյանը ժամանակի հետ քայլող հայրենասեր գիտնական էր։ Նա չէր կարող սառնասրտությամբ հեռվից դիտել, թե ինչպես, չարաշահելով հայ-արմեններին եկվոր լինելու հնդեվրոպաբանական տեսությունը, մեր հայրենիքի մեծ մասը բռնազավթված երեկվա քոչվոր ավարառու ցեղերը, արդեն պետականության հասած, 1930—1940-ական թթ. փորձում էին բռնառավթել ու հայաթափ անել նրա՝ կիսանկախության հասած փոքր մասը՝ խորհրդային Հայաստանը ևս։ Մենք այսքան երկար չէինք խոսի Գր. Ղափանցյանի վերահիշյալ՝ ժամանակին քննված ու գնահատված կարծիքների ու տեսությունների մասին, իթե այսօր էլ դրանք հայ ժողովրդի ու նրա լեզվի համար կենսական նշանակության հարցեր չլինեին։

11 Նույն տեղում, էջ 31։

12 Գ. Ղափանցյան. Հայոց լեզվի ծագման շուրջը.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1946, № 7, էջ 34։

13 Գ. Բ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 428։

14 Նույն տեղում, էջ 322։

Այս տեսանկյունից նայելով Գր. Ղափանցյանի գիտական ժառանգությանը՝ խիստ արդիական ենք համարում նրա հայացքները հայ բարբառների և ժամանակակից գրական հայերենի երկու ճյուղերի զարգացման պատմական ընթացքի, արդի վիճակի ու դերի և սրանց ապագայի վերաբերյալ: Գր. Ղափանցյանի համար հայ բարբառները թե՛ նախագրաբարյան, թե՛ գրաբարյան և թե՛ հետգրաբարյան ժամանակաշրջաններում հայոց լեզվի կարևոր, երբեմն կամ տեղ-տեղ միակ տարբերակն են, նրա պատմության անփոխարինելի սկզբնաղբյուրը:

«Եթե հայերենը (...) զարգանում (...) և դառնում է արդեն պետական-գրական և համաժողովրդական լեզու,—գրում է նա «Հայոց լեզվի պատմություն» մեջ,—ապա այդ ընդհանուր լեզվի կողքին շարունակել են մնալ նաև բարբառներ որպես տեղական-գյուղացիական խոսվածքներ, ունենալով իրենց առանձնահատկությունները, որոնք բնավ չեն կազմում «աղճատումներ» գրաբարի հանդեպ: Հասարակական, կուլտուրական և քաղաքական պայմաններ տարբեր հետևանք են ստեղծել թե՛ ընդհանրության համար և թե՛ մասնավոր կերպով զարգանալու տեսակետից: Ընդհանուր լեզվական կուլտուրայի մեջ մեր հին համաժողովրդական (միասնական) և գրային զարգացած լեզուն (գրաբարը) հարկավ դարձել է իր մշակամբ առաջինը, յուրացնելով հարատևորեն և շատ բարբառային բառեր ու ձևեր:

Բայց և այնպես գավառական այդ բարբառները չկանվեցին գրական ընդհանուր լեզվի կողմից,—շարունակում է հեղինակը,—որպիսի երևույթ տեղի է ունենում միայն այժմ միասնության, ուժեղ կուլտուրայի և պետականության պայմաններում»¹⁵:

Սակայն բարբառների պատմական-հայագիտական դերը դրանով էլ չի ավարտվի. բարբառների հավաքումն ու քննությունը մնում է հայագիտության ամենօրյա խնդիր, իսկ կորցրած—չփրկածի գիտակցումը՝ մշտական ափսոսանքի աղբյուր: «Որքան կշահեր հայագիտությունը,—գրում է Ղափանցյանը,—եթե մեր այդ հին և իսկական բարբառային բառարմատները հավաքված լինեին և տպագրված, ունենային իրենց հնարավոր ստուգաբանությունը և բացատրությունները»¹⁶: Երևի այս մտայնությամբ էլ նա մտադրված էր իր մայրենի՝ Աշտարակի բարբառի մասին մի ամբողջական ուսումնասիրություն գրել:

Բարձր գնահատելով ռուս ժողովրդի և նրա մշակույթի դերը հայ ժողովրդի և նրա լեզվի ու ողջ մշակույթի զարգացման գործում՝ Գր. Ղափանցյանը գրական արևելահայերենը համարում է ժամանակակից զարգացած լեռնների աստիճանի և գրաբարին մեծապես գերազանցած լեզու: Այդ մասին նա իր «Հայոց լեզվի պատմություն» ամփոփիչ աշխատության մեջ գրում է. «Միայն ռուս ժողովրդի քաղաքական և կուլտուրական հզոր պայմանները նպաստեցին հայ ժողովրդի ցիր ու գան եղած բնավոր հատվածների հավաքական կոնսոլիդացիային, դպրոցներ (Լազարյան, Ներսիսյան) ստեղծելուն, գիր ու գրականություն զարգացնելուն և այլն, որի հիմքում ընկած էր կենսոտանի և հասկանալի ժողովրդական լեզուն, այն էլ Արևելյան Հայաստանի հիմնական և կենտրոնական Արարատյան բարբառը, որը մշակվելով վեր է ածվել իր տրանսֆորմացիոն նոր միճակի՝ գրական և համաժողովրդական, իսկ ներկա հայության քաղաքական կադուսթրան տեսակետից՝ նաև ամբողջ հայության լեզվի: Այդ մեր նոր լեզուն, մշակվելով գրաբարյան, բարբառային (արարատյան), օտար լեզուների և մանավանդ հոգոր ռուսերենի ազդեցությամբ կարողադավ հասնել այժմյան դերիշխող լեզուների աստիճանին, մեծապես ոերադանցելով մեր հին պետականության և կուլտուրական լեզուն՝ գրաբարը»¹⁷:

15 Գ. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 19—20:

16 Նույն տեղում, էջ 19:

17 Նույն տեղում, էջ 20—21:

Այս օրերին, երբ գրաբարի փառաբանությամբ ու «դասական» անվամբ արևմտահայերենի ուղղագրությունը արևելահայերենին պարտադրելու, օտար լեզուներից նույնիսկ հարյուրամյակներ առաջ փոխառված բառերը նեղմիտ մաքրամոլությամբ ամեն զնով հայացնելու փորձեր են կատարվում, գրական հայերենի երկու ճյուղերի հետագա զարգացման հիմնահարցերի լուծման, օտար լեզուներից անհրաժեշտ փոխառություններ կատարելու և այլ հարցերում Գր. Ղափանցյանի վերահիշյալ եզրակացությունները նոր հնչեղություն և արժեք են ձեռք բերում: Ի դեպ, հայերենի գաղտնավանկի ը-ն չգրելու հնից եկող և տարածվող իրողությունը քննադատելով՝ Ղափանցյանը պահանջում է մտցնել լրիվ հնչական գրություն: «Ընդհանուր լեզվաբանություն» գրքում այդ մասին, նա որում է. «Մեր հին և նոր ուղղագրությունն այդ կողմից չի նպաստում բառին ճիշտ արտահայտում տալուն և հնչունափոխական երևույթը ճիշտ բնութագրելուն: Այդ ր չգրելը (Scripte defecta) երբեմն խանգարում է բառի ճիշտ միտքը անմիջապես հասկանալուն (օրինակ, ի՞նչ է նշանակում «կարճի»), այնինչ մենք պիտի մտցնենք լրիվ հնչական գրություն (Scripte plena), որը և մանկավարժական է»¹⁸:

Հակամանկավարժական և հակահնչական միայն գաղտնավանկի ը-ն չգրելը չէ. անհանդուրժելի XX դարի հայերենը XV դարի հայերենի ուղղագրական կանոններով դեռ տալու հակապատմական քարոզչություն-հարկադրանքն է, որը Գր. Ղափանցյանը վաղուց հաղթահարված ու անցյալ էր համարում: Մենք անարդար կլինենք, եթե փորձենք շրջանցել Գր. Ղափանցյանի կողմից արևելահայերենը «...ներկա հայության քաղաքական կացության տեսակետից՝ նաև ամբողջ հայության լեզու» ճանաչելու եզրակացությունը: Դարավերջին Հայաստանի անկախացմամբ, սփյուռքի կամ արտերկրի հայության քանակական և ազգային որակական փոփոխություններով լեզվի միասնության հարցի դրվածքը արդեն նոր ընթերցումներ ունի: Դեռևս գարսկզբին, 1915 թ. «Հայոց գրական լեզվի խնդիրը» թեմայով կարդացած դասախոսությունը Հովհ. Թումանյանը ավարտել է հետևյալ խոսքով. «Եվ էսպես, հայոց գրական լեզվի խնդիրը, զանազան շրջաններ անցնելուց հետո, մերձեցականապես պիտի վճռվի ժողովրդական լեզվի կատարյալ հաղթանակով, ժողովրդական լեզվի հաղթանակը պիտի պսակվի ազգային ուժեղ գրականությամբ, իսկ ազգային ուժեղ գրականություն՝ կնշանակի՝ ինքնուրույն ու հզոր ժողովուրդ»¹⁹: «Ժողովրդական լեզուն» իր հայրենիքում ապրող ժողովրդի բերանում է. «ազգային ուժեղ գրականությունը» հայրենի հողի վրա ստեղծված և շարունակվող դասական դարձած գրականությունն է: Լեզվի միասնության մյուս ուղիները մոլորյալ են. հետևաբար այս հարցի տարբեր մեկնաբանությունների մեջ Գր. Ղափանցյանինը ամենաիրականն է:

Գր. Ղափանցյանը իր գիտական բեղմնավոր գործունեությանը զուգահեռ վարել է նաև վարչական պաշտոններ. եղել է ՀԳԱ հասարակագիտական բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, 1950—1956 թթ.՝ լեզվի ինստիտուտի տնօրեն, 1920—1954 թթ.՝ Երևանի պետական համալսարանի լեզվաբանության ամբիոնի վարիչ: Սկսած 1920 թ. մինչև իր կյանքի վերջը Գր. Ղափանցյանը նախ՝ համալսարանում, ապա՝ և Երևանի մյուս բուհերի հայագիտական բոլոր ֆակուլտետներում «լեզվաբանություն» առարկայի անփոխարինելի դասախոսն էր: Դասախոսել է նաև գրաբար, հայերենի համեմատական քերականություն, ուրարտերեն:

Ղափանցյան ռիտմական գիտական ժառանգության մասին քննադատություններ շատ եմ կառգացել ու լսել, բայց Ղափանցյան մարդու և գիտնական-դասախոսի մասին ոչ մի չարախոսություն լսած չկամ: Նրան ոչ ոք հայրանունով չէր դիմում, նա մեզ համար միայն ընկեր Ղափանցյան էր:

18 Գ. Ղափանցյան. Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939, էջ 102:

19 Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1951, էջ 380:

Բայց առաջին իսկ դասախոսություններից մենք գիտեինք նրա «լուսահոգի հոր» Այվազի անունը, որին նա առիթը բաց չէր թողնում երախտագիտություն մարմն հիշելու և վերհիշելու: Ղափանցյանի խստահայաց ու խոժոռադեմ արտաքինի տակ մենք տեսնում էինք նրա մանկան պես պարզ ու միամիտ, մանկան պես բարի ներաշխարհը, զգում էինք նրա՝ որպես իսկական գիտնական-ուսուցչի կրած խաշի ծանրությունը:

Աշտարակում՝ գիտնականի ծննդավայրում, նրա անունով տուն-թանգարան կա, որը, ինչպես վերջերս հաղորդվեց, խնամքի կարիք ունի. ուզում են որևէ բարերարի սեփականաշնորհել: Հայերեն «աշտարակ» բառը չբավարարեց Ղափանցյանին իր ծննդավայրի անվան ստուգաբանության համար և նա, Աշտարակ անվանը պատմական նոր շուք տալու համար, այն առաջացած համարեց անուրաքարեկան Իշտար աստվածուհու անունից: Այս միակ ստուգաբանությունն անգամ բավարար էր, որպեսզի երախտապարտ աշտարակցիները նրա տուն-թանգարանի խնամքը իրենց վրա վերցնեին: Իսկ որ հայկական բոլոր պետությունների ու թագավորությունների, սրանց քաղաքների ու մայրաքաղաքների, աստվածների ու թագավորների պատմության ու գործի պատմական ու լեզվական քննությունը զալիք սերունդներին թողած հայրենասեր գիտնականի անունով Հայաստանի մայրաքաղաքում մի շենքի մուտքի երկտող մակագրությունից բացի, մեկ հուշաքար անդամ չկա,— էլ չենք ասում արձան, փողոց ու հրապարակ,— այդ մասին պիտի հոգան բոլոր նրանք, ովքեր դրան իրավասու են:

ГРИГОР КАПАНЦЯН — ЯЗЫКОВЕД-АРМЕНИСТ

(К 110-летию со дня рождения)

Доктор филол. наук О. Х. БАРСЕГЯН

Р е з ю м е

Григор Айвазович Капанцян (1887—1957)—знаменитый языковед-арменист, один из основателей Академии наук Армении, получил блестящее образование на восточном факультете Петербургского университета. Еще до революции началась научно-педагогическая деятельность Г. Капанцяна. Его перу принадлежит ряд фундаментальных, общелингвистических и арменоведческих исследований, а труд «Общее языкознание» признан лучшим учебным пособием для армянских вузов. Многочисленные разыскания ученого, относящиеся к генезису и структуре старых и новых языков, представляют большую источниковедческую и научную ценность. Исследования ученого-патриота в области диалектов армянского языка, грабара, современных восточноармянского и западноармянского языков глубоко научны и имеют современное звучание. Г. Капанцян был горячим проповедником тесных русско-армянских культурных связей. Несмотря на большую занятость, он вел и административную работу—руководил отделением общественных наук АН Армении, в 1920—54 гг. заведовал кафедрой языкознания Ереванского госуниверситета, в 1950—56 гг. был директором Института языка АН Армении.